ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԻՄՆԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ
ՊԵՏ ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 30-ը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի փորձագետ Էմմա Քյուրքչյանի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում իմ աշխատանքային գործունեությունն ուղղված է եղել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը, սոցիալական ներառման քաղաքականության արդյունավետ իրականացմանը, ոլորտային իրավական կարգավորումների բարելավմանը, ինչպես նաև տեղեկատվական համակարգերի զարգացմանն ու շահառուների անհատական խնդիրների խորացված ուսումնասիրությանն ու դրանց պատշաճ լուծումների մշակմանը: Աշխատանքները կատարվել են նախարարության ռազմավարական ուղղություններին և բաժնի գործառույթներին համապատասխան:

1. Մասնակցել եմ հաշմանդամություն ունեցող անձանց հաշմանդամությամբ պայմանավորված լրացուցիչ ծախսերի (extra cost) ուսումնասիրման և վերլուծության աշխատանքներին. դիտարկվել են հաշմանդամության տարբեր տեսակների հետ կապված ծախսերի հիմնական ուղղությունները, միջազգային փորձը և կիրառվող մոտեցումները:
2. Ներկայացվել են առաջարկություններ «Աջակցող միջոցների տրամադրման» տեղեկատվական համակարգում նոր տեսակի աջակցող միջոցների ներդրման, գների փոփոխությունների և համակարգի կատարելագործման վերաբերյալ, ինչպես նաև կազմվել են համապատասխան գրություններ «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամին:

3. Իրականացրել եմ հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և սոցիալ վերականգնողական ծառայությունների մատուցման վերաբերյալ հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված («Աստղավարդ» ՀԿ, «Աուտիզմ ազգային հիմնադրամ» «Հույսի Մեծամոր» ՀԿ, «Լիարժեք կյանք» ՀԿ, «Փրկություն» ԲՀԿ) հաշվետվությունների ընդունման, հաշվետվությունների վերաբերյալ եզրակացությունների և համապատասխան գրությունների կազմման աշխատանքներ:
4. Մասնակցել եմ նորմատիվային փաստաթղթերի վերանայման աշխատանքներին, այդ թվում՝ աջակցող միջոցների տրամադրման գործընթացների բարելավմանն ուղղված նախաձեռնություններին՝ ՀՀ կառավարության 2024 թվականի հունիսի 27-ի N 1004-Ն որոշման շրջանակներում: Իրականացվել են աջակցող միջոցների ցանկերի վերանայման և ընդլայնման աշխատանքներ:
5. Իրականացվել են քաղաքացիների դիմում-բողոքների ուսումնասիրման և դրանց արձագանքման աշխատանքներ. վերլուծվել են դիմումները, տրամադրվել են անհրաժեշտ պարզաբանումներ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, արտոնությունների և պետական աջակցության ծրագրերի վերաբերյալ:
6. Բաժնի պետի հանձնարարությամբ կազմվել են գրություններ, տեղեկանքներ և այլ փաստաթղթեր, իրականացվել են ընթացիկ աշխատանքներ, ինչպես նաև պատրաստվել են առաջարկություններ և եզրակացություններ՝ բաժնի գործառույթներից և խնդիրներից բխող:
7. Մասնակցել եմ շահառուների կարիքների գնահատման գործընթացներին. իրականացվել է շահառուների կարիքների վերլուծություն և հնարավորությունների նախնական գնահատում՝ ծառայությունների ավելի նպատակային և արդյունավետ ուղղորդում ապահովելու նպատակով:
8. Շարունակվել է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ: Կայացել են մի շարք հանդիպումներ և քննարկումներ միջազգային գործընկերների (մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և ներառական քաղաքականության ոլորտում ներգրավված կառույցների) հետ: Քննարկվել են բարեփոխումների ընթացքը, վիճակագրական տվյալները, ոլորտային մարտահրավերները և նորարարական լուծումները:
9. Մասնակցել եմ բաժնի կողմից իրականացվող միջոցառումների, ծրագրերի կազմակերպման, իրականացման և վերահսկման գործընթացներին:

10. Մասնակցել եմ հաշմանդամություն ունեցող անձանց ապաինստիտուցիոնալացման քաղաքականության մշակման և իրականացման աշխատանքներին՝ ուղղված հաստատություններից դեպի համայնքահեն խնամքի և աջակցության ծառայությունների զարգացմանը:
11. Մասնակցել եմ հաշմանդամություն ունեցող անձանց ոլորտում իրականացվող ծրագրերի և քաղաքականությունների ընթացիկ գնահատման և վերլուծության աշխատանքներին. ուսումնասիրվել է գործող ծրագրերի արդյունավետությունը, կիրառման ընթացքում ի հայտ եկած խնդիրներն ու ռիսկերը, ինչպես նաև ներկայացվել են առաջարկություններ ծրագրերի և ծառայությունների կատարելագործման ուղղությամբ:

29.12.2025թ.

Փորձագետ՝ Էմմա Քյուրքչյան

Զեկուցագիրն ընդունեցի:

Տնօրեն Ա. Թադևոսյան